

**ՀԱՍՏՏՎԱԾ Է / APPROVED**

«ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻՉ»  
փակ բաժնետիրական  
ընկերության  
2022 թվականի նոյեմբերի 9-ի  
իմնադիրների (Բաժնետերերի)  
ընդհանուր ժողովի որոշմամբ  
(Արձանագրություն թիվ 1)

By the resolution of the General  
Meeting of Founders  
(Shareholders) of "NEW  
VENTURE BROKERAGE" closed  
joint stock company  
dated 9th of November, 2022  
(minutes #1)

**Ժողովի նախագահ՝**

**The Meeting chairman**

**Գրիգորի Տրուբկին**

**Grigorii Trubkin**



(ստորագրություն) (signature)

**ԳՐԱՆՑՎԱԾ Է / REGISTERED**

«Կենտրոնական բանկում  
in RoA Central Bank

25.07.2023թ. -/4

«Կենտրոնական բանկի նախագահ՝  
RoA Central Bank Governor

Մարտին Գալստյան / Martin Galstyan



(ստորագրություն) (signature)

**«ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻՉ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**CHARTER**

**OF**

**"NEW VENTURE BROKERAGE" CLOSED JOINT STOCK COMPANY**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՆՅՈՒ ԿԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻՋ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի Կանոնադրական կապիտալը (այսուհետ՝ Կանոնադրական կապիտալ) բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.2. Ընկերությունը ստեղծվել է 2022 թվականի նոյեմբերի 9-ի Ընկերության հիմնադիրների (Բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ (Արձանագրություն թիվ 1):

1.3. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման) պահից:

1.4. Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

1.5. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և սույն Կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):

1.6. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան բովանդակում է Կանոնադրությունը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

1.7. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն Կանոնադրությամբ,

## 1. GENERAL PROVISIONS

1.1. "NEW VENTURE BROKERAGE" closed joint stock company (hereinafter referred to as the Company) is a business Company, a commercial organization, the statutory capital (hereinafter referred to as Statutory capital) of which is split into a certain number of shares certifying the responsible right of shareholders in relation to the Company.

1.2. The Company was established by the resolution of the General Meeting of Founders (Shareholders) of the Company dated 9th of November, 2022 (minutes #1):

1.3. The Company is deemed created from the moment of its registration by the Central Bank of Armenia and terminates from the moment of liquidation (recording an entry in the register of investment companies about liquidation).

1.4. The Company may have stamps and blanks bearing its business name, as well as a logo, trademarks, and other brand marks registered in the manner foreseen by law.

1.5. During its activity, the Company is governed by the Civil Code of the Republic of Armenia (hereinafter referred to as the Code), the Law on Joint Stock Companies of Republic of Armenia (hereinafter referred to as the Law), the Law on the Securities Market of Republic of Armenia, other legislative acts of Republic of Armenia, the charter of the Company (hereinafter the Charter).

1.6. If international treaties of the Republic of Armenia regulate joint-stock Company activities by norms other than those in the Charter, then the norms of the international treaty shall prevail.

1.7. The relations between the shareholders of the Company and the Company shall be

Օրենսգրքով, Օրենքով և այլ իրավական ակտերով:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻԴՋ» փակ բաժնետիրական ընկերություն, հայերեն կրճատ՝ «ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻԴՋ» ՓԲԸ, ռուսերեն լրիվ՝ «НЬЮ ВЕНЧУР БРОКЕРИДЖ» закрытое акционерное общество, ռուսերեն կրճատ՝ «НЬЮ ВЕНЧУР БРОКЕРИДЖ» ЗАО, անգլերեն լրիվ՝ "NEW VENTURE BROKERAGE" Closed Joint Stock Company, անգլերեն կրճատ՝ "NEW VENTURE BROKERAGE" CJSC.

1.9. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան, 26/1, 413 գրասենյակ:

1.10. Կանոնադրությամբ չկարգավորված բոլոր հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

2.2. Ընկերությունն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

2.3. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

2.4. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության

regulated by this Charter, the Code, the Law, and other legal acts.

1.8. The business name of the Company is: full name in Armenian: «ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻԴՋ» փակ բաժնետիրական ընկերություն, abbreviated name in Armenian: «ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻԴՋ» ՓԲԸ, full in Russian: «НЬЮ ВЕНЧУР БРОКЕРИДЖ» закрытое акционерное общество, abbreviated name in Russian: «НЬЮ ВЕНЧУР БРОКЕРИДЖ» ЗАО, full name in English: "NEW VENTURE BROKERAGE" Closed Joint Stock Company, abbreviation name in English: "NEW VENTURE BROKERAGE" CJSC.

1.9. The place of location of the Company and legal (postal) address: Vazgen Sargsyan 26/1, office 413, Yerevan, Armenia.

1.10. All issues not regulated by the Charter are regulated by the legislation of Republic of Armenia.

## 2. LEGAL STATUS OF THE COMPANY

2.1. The Company is a commercial legal entity.

2.2. The Company has property that is separated from that of its shareholders and is accounted in its own balance sheet.

2.3. The Company shall be liable for its obligations with all the property it owns.

2.4. The Company shall not be liable for the obligations of its shareholders. The shareholders of the Company shall not be liable for the Company's obligations; the shareholders shall bear the risk of damage associated with Company activities to the extent of the value of their shares.

գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

2.5. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար:

2.6. Բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

2.7. Ընկերությունը կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

2.8. Ընկերությունն կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

2.5.If the reason for Company insolvency (bankruptcy) is the activities (inaction) of shareholders or other persons that have either the right to give compelling instructions to the Company or an opportunity to determine the activities of the Company in advance, then these shareholders or other persons may be exposed to additional/subsidiary liability for the Company's obligations in an amount that cannot be covered sufficiently by the Company's property.

2.6.The activities (inaction) of shareholders or other persons are deemed causes to Company insolvency (bankruptcy) only if they used their rights or opportunities to compel the Company to carrying out or refraining from carrying out certain activities, knowing in advance that it would lead the Company to a state of insolvency (bankruptcy).

2.7.The Company may enter into contracts on its behalf, obtain and realize, on its behalf, property and personal non-property rights, bear responsibilities and act as a claimant or respondent in court.

2.8.The Company may open bank accounts in the banks of the Republic of Armenia and foreign countries, both in AMD and in foreign currency, in the manner stipulated by law.

### **3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

- 3.1. Ընկերության ստեղծման նպատակն է գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:
- 3.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակն է ներդրումային ծառայությունների մատուցումը առանձին կամ ոչ հիմնական ծառայությունների հետ մեկտեղ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 3.3. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցմամբ Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում լիցենզիա ստանալու պահից:
- 3.4. Ընկերությունը կարող է իրականացնել նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:
- 3.5. Ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում Ընկերությունը ենթակա է լուծարման՝ օրենքով սահմանված կարգով:
- 3.6. Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:
- 3.7. Ընկերությունն իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

### **4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ԴՈՒՍՏՐ ԵՎ ԿԱՆՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 4.1. Ընկերությունն իրավունք ունի Կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի, Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես

### **3. SPHERE OF ACTIVITIES AND OBJECTIVES OF THE COMPANY**

- 3.1. The purpose of creating the Company is to make a profit by doing business.
- 3.2. The main type of activity of the Company is the provision of investment services on solo bases or together with or non-core services in accordance with the Law of the Republic of Armenia "On Securities Market" and the normative legal acts of the Central Bank of the Republic of Armenia.
- 3.3. The Company can provide investment services defined by the Law of the Republic of Armenia "On Securities Market" only in case of obtaining a license (special permit).
- 3.4. The Company may also carry out any activity not prohibited by the Law of the Republic of Armenia "On Securities Market".
- 3.5. In case the Company's license to provide investment services is completely revoked, the Company is subject to liquidation in accordance with the law.
- 3.6. The rights of the Company may be restricted only in cases provided by law and in the manner prescribed by law.
- 3.7. The Company carries out its operations exclusively on non-cash basis.

### **4. COMPANY BRANCHES, REPRESENTATIVE OFFICES, DAUGHTER AND DEPENDENT COMPANIES**

- 4.1. The Company has the right to establish separate subdivisions (branches and representative offices) in the territory of the Republic of Armenia and other states in accordance with the provisions of the Charter, the Code, the Law, the Law of the Republic of

Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

4.2. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:

4.3. Ընկերության մասնաճյուղ է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս և իրավունք ունի իրականացնել Ընկերության բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը, ներառյալ ներկայացուցչական գործառույթները:

4.4. Ընկերության ներկայացուցչություն է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

4.5. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

4.6. Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության դուստր ընկերություն, եթե Ընկերությունը այդ ընկերության Կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ օրենքով չարգելված այլ ձևով (այդ թվում հիմնական և դուստր ընկերությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան) հնարավորություն ունի կանխորոշելու ընկերության որոշումները:

4.7. Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության կախյալ ընկերություն, եթե Ընկերությունն ունի այդ ընկերության բաժնեմասերի (քվեարկող բաժնետոմսերի) ավելի քան քսան տոկոսը:

Armenia "On Securities Market" and other legal acts.

4.2. Company branches and representative offices are not legal entities; they act on the basis of charters approved by the Company. Branch and representative office managers are appointed by the Company; they act on the basis of powers of attorney issued by the Company.

4.3. The Company branch is a separated subdivision of the Company located outside of the Company's place of location, which implements all or a part of the Company's functions, including functions of representation.

4.4. The Company representative office is a separated subdivision of the Company located outside of the Company's place of location, which represents the interests of the Company and implements their protection.

4.5. The Company has the right to have a daughter and dependent companies with the status of a legal entity, in the cases defined by the RA Law on the Securities Market.

4.6. A company is considered a daughter company if the Company or affiliation has the opportunity of pre-determining the actions of the daughter company either by means of its majority statutory capital share, or under an agreement between the two companies, or in any other way not forbidden by law.

4.7. A company shall be considered dependent on the Company or affiliation if the latter (the dominant, participating) company or affiliation has more than twenty percent of the voting shares of the dependent company.

4.8. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

4.9. Դուստր ընկերությունը պարտավորություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար:

4.11. Ընկերությունը համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության այն գործարքների համար, որոնք կատարվում են ի իրականացումն Ընկերության կողմից տրված և դուստր ընկերության համար պարտադիր կատարման ենթակա ցուցումների: Ընկերությունը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքն ամրագրված է նրանց միջև կնքված պայմանագրում կամ ծագում է օրենքով չարգելված այլ ձևով:

4.12. Ընկերության մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում Ընկերությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար:

4.8.The creation of daughter and dependent companies abroad shall be carried out in line with the laws and legal acts of the host country and in accordance with the Law of the Republic of Armenia "On Securities Market" unless otherwise stipulated by the international treaties of the Republic of Armenia.

4.10. A daughter company shall not bear liability for the obligations of the Company (affiliation).

4.11.The company (affiliation) that has the right to deliver compelling instructions to the daughter company shall share with the daughter company the liability for transactions carried out at its instruction. The company (affiliation) is deemed to have the right to deliver compelling instructions to the daughter company if this right is granted by an agreement between the companies or emanates in another way not forbidden by law.

4.12.In case of daughter company bankruptcy caused by the Company (affiliation), the latter shall bear subsidiary liability for daughter company debt.

## 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

5.1. Ընկերության Կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

5.2. Ընկերության Կանոնադրական կապիտալն արտահայտվում և ամբողջությամբ վճարվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

5.3. Ընկերության Կանոնադրական կապիտալը կազմում է 362,000,000 (երեք հարյուր վաթսուներեկ միլիոն յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 362,000,000 (երեք հարյուր վաթսուներեկ միլիոն յոթանասուներկու հազար) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը՝ 1 (մեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բոլոր 362,000,000 (երեք հարյուր վաթսուներեկ միլիոն յոթանասուներկու հազար)) հատ հասարակ

## 5.STATUTORY CAPITAL OF THE COMPANY

5.1.Company Statutory capital is made up of the nominal value of shares acquired by shareholders. Company Statutory capital determines the minimum amount of Company property guaranteeing the interests of its creditors.

5.2.Company Statutory capital shall be expressed and completely paid-in in drams of the Republic of Armenia.

5.3.The Statutory capital of the Company is 362,000,000 (three hundred sixty-one million seventy-two thousand) AMD, which consists of 362,000,000 (three hundred sixty-one million seventy-two thousand) ordinary nominal shares, each with a nominal value of 1 (one) AMD. All 362,000,000 (three hundred sixty-one million seventy-two thousand) ordinary nominal shares are outstanding among the shareholders and are fully paid by them.

(սովորական) անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

5.4. Ընկերությունն ունի 360,000,000 (երեք հարյուր վաթսու միլիոն) հայտարարագրված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, յուրաքանչյուրը 1 (մեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք Ընկերությունը կարող է շրջանառել ի հավելումն առկա բաժնետոմսերի:

5.5. Ընկերությունը կարող է որոշել փոխել իր Կանոնադրական կապիտալի չափը:

5.6. Ընկերությունը կարող է մեծացնել իր Կանոնադրական կապիտալը բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով:

5.7. Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը ընդունում է Ընկերության ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողով):

5.8. Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության Կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

5.9. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

1) լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակն այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում:

2) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

3) Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր Կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

5.10. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել Կանոնադրական կապիտալը՝

5.4.The Company has 360,000,000 (three hundred sixty million) declared ordinary nominal shares, each with a nominal value of AMD 1 (one), that the Company may outstanding in addition to the outstanding shares.

5.5.The Company may decide to change the size of its Statutory capital.

5.6.The Company may increase its Statutory capital by means of increasing the nominal value of shares or allocating additional shares.

5.7.The decision on increasing Statutory capital shall be adopted by the general meeting of shareholders of the company (hereinafter referred to as the Meeting).

5.8.The Company may decide to allocate additional shares only if it does not exceed the quantity of shares declared in the Charter, and only if the previously outstanding shares have been paid for in full.

5.9.The decision on allocating additional shares shall define:

1) The quantity of additionally outstanding ordinary (nominal) shares, which (the quantity) shall not exceed the declared quantity of such shares; and

2) The procedure and timeframe for allocation of additional shares, as well as the value of shares to be outstanding amongst shareholders who have the right of first refusal and amongst holders of other securities.

3) If the price of the previously outstanding shares has not been paid for in full, then the Company may not increase its equity by means of mobilizing funding.

5.10.Having summed up the results of its financial performance, the Company may increase its Statutory capital by means of increasing the nominal value of outstanding shares:



1) շահույթի մի մասը փոխանցելով Կանոնադրական կապիտալ,

2) Կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով Կանոնադրական կապիտալ:

5.11. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

5.12. Ընկերության Կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման միջոցով կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման միջոցով, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

5.13. Ընկերությունը Կանոնադրական կապիտալը նվազեցնելու նպատակով բաժնետոմսեր կարող է ձեռք բերել միայն բաժնետերերի համաձայնությամբ: Ընկերության Կանոնադրական կապիտալի նվազեցման և Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

5.14. Ընկերության Կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով՝ նրա բոլոր պարտատերերին ծանուցելուց հետո: Այդ դեպքում Ընկերության պարտատերերն իրավունք ունեն ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

5.15. Կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները, բացառությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքն ընկերության Կանոնադրական կապիտալի չափից պակասելու հիմքով Կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքի, կատարվում են Կանոնադրության ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցումից հետո:

## 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

1) by making a profit transfer to equity; and

2) by transferring to the the Statutory capital all or a part of the property (net assets) that exceeds the sum of equity, reserve capital, and the total difference between the liquidation and nominal values of preferred shares.

5.11. The increase in Company Statutory capital by means of increasing the nominal value of shares may not be greater than the value of net assets as stated in the most recent reports approved by the Meeting or established on the basis of the most recent audit results.

5.12. The Company Statutory capital may be reduced by means of lowering the nominal value of shares or by means of reducing the total quantity of shares, including, in cases stipulated by this Law, by means of buyback and redemption of a part thereof.

5.13. The Company may acquire shares for the purpose of reducing Company Statutory capital only with the consent of the shareholders. A decision on reducing Company Statutory capital and amending the Charter is made by the Meeting, with a 3/4s vote of the holders of voting shares participating in the Meeting, which shall be no less than 2/3s of the total votes of all the holders of voting shares.

5.14. The company's Statutory capital is allowed to be reduced in the manner prescribed by the Law after giving notice to all its creditors. Within 30 days after receipt of such notice, the creditors may demand either that the Company provide additional guarantees that the obligations will be met, or early fulfilment or termination of obligations, as well as compensation for losses.

15.15. Payments to shareholders due to the reduction of the Statutory capital, except for the case of the reduction of the Statutory capital on the basis of the Company's net asset value being less than the amount of the Statutory capital of the Company, shall be made after the registration of the Charter by the Central Bank of Armenia.

## 6. COMPANY SHARES

6.1. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել հասարակ (սովորական) բաժնետոմսեր «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

6.2. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

6.3. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտվելուց հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

6.4. Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը հավասար է 1 (մեկ) ՀՀ դրամ:

6.5. Բաժնետոմսն անբաժանելի է (ամբողջական բաժնետոմս), բացառությամբ կոտորակային բաժնետոմսեր առաջանալու՝ Օրենքով նախատեսված դեպքերի: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

6.6. Կոտորակային բաժնետոմսով դրա սեփականատիրոջը տրամադրվում են համապատասխան բաժնետոմսերով տրամադրվող բոլոր իրավունքները՝ տվյալ բաժնետոմսի՝ իրեն պատկանող կոտորակին (մասին) համամասնորեն:

6.7. Միևնույն անձին երկու կամ ավելի կոտորակային բաժնետոմսեր պատկանելու դեպքում այդ կոտորակային բաժնետոմսերը ձևավորում են ամբողջական կամ կոտորակային բաժնետոմս՝ դրանց հանրագումարին համապատասխան:

6.8. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

6.9. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

6.1.The Company may issue and place shares in accordance with the Law of the Republic of Armenia "On Securities Market", the Law and other legal acts.

6.2.Each ordinary nominal share shall entitle its holder to one vote.

6.3.Once the allocation of shares issued by the Company is complete, the Company shall register the shares of the shareholders in the personal accounts of shareholders in its shareholder registry, in accordance with the provisions of the Law RA on Security Market Act.

6.4.The par value of ordinary (nominal) shares issued by the Company is equal to 1 (one) AMD.

6.5.A share cannot be split/divided except in cases of fractional shares provided by the Law. If two or more persons own one share, then they together are deemed one shareholder.

6.6.A fractional share is granted to its owner rights granted by the relevant type of shares in proportion to the fraction (about) of the given share.

6.7.If two or more fractional shares belong to the same person, those fractional shares shall form whole or fractional shares in accordance with their sum.

6.8.Additional shares of the Company must be paid within the period specified in the decision on their placement, but not later than within one year from the moment of their placement.

6.9.Payment for the Company's shares is made in Armenian dram.

6.10. Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության Կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

## **7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

7.1. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք սահմանված են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված:

7.2. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության խորհրդի (այսուհետև՝ խորհրդի) որոշմամբ կամ խորհրդի որոշմամբ կարող է պատվիրակվել Ընկերության գլխավոր տնօրենին (այսուհետև՝ գլխավոր տնօրեն):

## **8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԸ**

8.1. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ Կանոնադրական կապիտալի 15 % չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության Կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

8.2. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

6.10. Shares transferred to the Company for its disposal do not grant a voting right; they are not accounted for when counting votes, and they do not gain accrual of dividends.

These shares must be sold by the Company within one year of their transfer to the Company. Otherwise, the Meeting shall decide on the change of the Company's Statutory capital by redemption of the returned shares.

## **7. COMPANY BONDS AND OTHER SECURITIES**

7.1. The Company has the right to issue bonds and other securities defined by the RA Law on Securities Market, the Law and other legal acts.

7.2. The placement of bonds and other securities is carried out by the decision of the Board of the Company (hereinafter - the Board), or by the decision of the Board may be delegated to the general director of the Company (hereinafter - the General director).

## **8. COMPANY FUNDS AND NET ASSETS**

8.1. The Company has a reserve fund of 15% of the Statutory capital. If the reserve fund is smaller than the size foreseen by the Charter, then allocations to this Fund shall be made in the amount of at least 5 percent of profit, as well as from the proceeds of the difference between the emission value of new shares and their nominal value.

8.2. The reserve fund shall be used to cover Company losses, redeem Company bonds, and buy back Company shares, if the profits and other funds of the Company are insufficient for such purposes.

8.3. Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

8.4. Ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

8.5. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության կամ աուդիտի արդյունքների տվյալներով՝ օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

8.6. Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր Կանոնադրական կապիտալի նվազումը:

8.7. Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվում է, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն կամ Օրենքով կամ այլ իրավական ակտերով կանոնադրական կապիտալի նվազագույն չափի սահմանված լինելու դեպքում Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է սահմանված չափից, ապա Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է Խորհրդին ներկայացնել արտահերթ ժողովի գումարման պահանջ:

8.8. Նման դեպքերում արտահերթ ժողովում որոշում է կայացվում Ընկերության լուծարման կամ դրա գործունեությունը շարունակելու մասին: Ընդ որում, գործունեությունը շարունակելու մասին որոշում կարող է ընդունվել, եթե Խորհուրդը ներկայացրել է գրավոր եզրակացություն Ընկերության գործունեությունը զուտ ակտիվների առկա չափի պարագայում շարունակելու նպատակահարմարության և հիմնավորվածության վերաբերյալ՝ հիմք ընդունելով Ընկերության գործունեության ուղղությունները, ոլորտը, առանձնահատկությունները, գործունեության ծրագրերը և այլ հանգամանքներ:

8.9. Գործունեությունը շարունակելու մասին որոշում ընդունվելու դեպքում Ընկերությունը պարտավոր է այդ մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտարարություն տեղադրել Հայաստանի

8.3.The reserve fund may not be used for other purposes.

8.4.By the decision of the Meeting, the Company may also establish other funds for the payment of dividends, employee share, consumption, accumulation, social development.

8.5.The value of Company net assets is estimated using data from a Company balance sheet or audit inspection, in the manner stipulated by laws and other legal acts.

8.6.If it turns out at the end of the second and each of the following financial years that the net assets of the Company are smaller than Statutory capital, the Company shall announce reduction of its Statutory capital and register it in the established manner.

8.7.If, at the end of each subsequent financial year, the value of the Company's net assets turns out to be negative or the minimum amount of the Company's net assets turns out to be less than the amount established by law or other legal acts, the Company's General director is responsible to submit a request to the Board to convene an extraordinary Meeting.

8.8.In such cases, a extraordinary Meeting decides on the liquidation of the Company or its continuation. In addition, a decision to continue the activity may be made if the Board has submitted a written conclusion on the expediency justification to continue the Company's activity in the current net asset size, based on the Company's directions, scope, features, business plans and other circumstances.

8.9.If a decision is made to continue activities, the Company is obliged to place an announcement about this on the official website of public announcements <http://www.azdarar.am> within 10 working days

Հանրապետության հրապարակային  
ծանուցումների <http://www.azdarar.am>  
պաշտոնական ինտերնետային կայքում և  
գործունեությունը շարունակելու մասին  
որոշումը ներկայացնել Ընկերության  
պետական գրանցումն իրականացրած  
մարմին:

## 9. ԲԱԺՆԵՏԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ  
(սովորական) բաժնետոմս տալիս է իր  
սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը  
միևնույն իրավունքները:

9.2. Հասարակ (սովորական) բաժնետոմսի  
սեփականատեր հանդիսացող բաժնետերը  
Օրենքի և Կանոնադրության համաձայն  
իրավունք ունի.

1) մասնակցել ժողովին՝ վերջինիս  
իրավասությանը պատկանող բոլոր հարցերի  
նկատմամբ ձայնի իրավունքով,

2) Ընկերության բաժնետերը (բաժնետերերը),  
որը (որոնք) տիրապետում է (են) Ընկերության  
քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով  
տրամադրվող ձայների քանակի առնվազն 2  
տոկոսին, Ընկերության ֆինանսական տարվա  
ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում իրավունք  
ունի (ունեն) երկուսից ոչ ավելի  
առաջարկություններ ներկայացնել տարեկան  
ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև  
առաջարկել խորհրդի անդամության թեկնածու,

3) մասնակցել Ընկերության կառավարմանը,

4) ստանալ շահութաբաժիններ Ընկերության  
գործունեությունից առաջացած շահույթից,

5) առաջնահերթ կարգով ձեռք բերել  
Ընկերության կողմից տեղաբաշխվող  
բաժնետոմսերը, Օրենքով և Կանոնադրությամբ  
սահմանված կարգով,

6) ստանալ Ընկերության գործունեության  
վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝  
գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝  
Կանոնադրությամբ սահմանված կարգով  
ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին,  
հաշվետվություններին, հաշվապահական  
գրքերին, Ընկերության տնտեսական  
գործունեությանը,

7) Ընկերության Կանոնադրական կապիտալի  
առնվազն 5% կազմող ձայնի իրավունք տվող  
բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող  
են պահանջել աուդիտոր՝ Ընկերության  
գործունեությանը վերաբերող

and to send a decision to continue activities to  
the state registration authority of the Company.

## 9. RIGHTS AND RESPONSIBILITIES OF HOLDERS OF ORDINARY (PLAIN) SHARES

9.1. All the holders of ordinary (nominal) shares  
of a Company enjoy identical rights.

9.2. According to this Law and the  
Company Charter, a holder/owner of ordinary  
(nominal) shares may:

1) participate in the Meeting, with the right to  
vote on all the issues decided upon by the  
Meeting.

2) The Company shareholder (shareholders)  
who owns (own) at least 2 percent of the  
Company's voting shares may, within 30 days  
after the end of the financial year or in a longer  
period foreseen by the Charter, submit a  
maximum of two suggestions on the annual  
Meeting agenda, as well as proposed  
candidates for members of the Board.

3) participate in Company management.

4) obtain dividends from the Company profits.

5) have the right of first refusal for shares  
outstanding by the Company, unless otherwise  
stipulated by this Law and the Charter.

6) obtain any information on the activities of the  
Company, except for confidential documents,  
including the access to the balance sheet,  
reports, and business and production activities  
of the Company in the manner established in the  
Charter.

7) Shareholders holding voting shares of at least  
5% of the Company's Statutory capital may  
require an auditor to review the Company's  
performance reports. Audit costs are reimbursed  
by the shareholders requesting the audit.

հաշվետվությունները ստուգելու նպատակով:  
Ստուգման հետ կապված ծախսերը  
փոխհատուցում են ստուգումը պահանջող  
բաժնետերերը,

8) ժողովում իր իրավունքները ներկայացնելու  
համար լիազորել երրորդ անձի,

9) ժողովում հանդես գալ  
առաջարկություններով,

10) ժողովներում քվեարկել իրեն պատկանող  
բաժնետոմսերի ձայների չափով.

11) հայցով դիմել դատարան՝ ժողովի կողմից  
ընդունված և գործող օրենքներին և այլ  
իրավական ակտերին հակասող որոշումների  
բողոքարկման նպատակով,

12) Ընկերության լուծարման դեպքում  
ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք  
մասը,

13) օգտվել Կանոնադրությամբ  
նախատեսված այլ իրավունքներից:

9.3. Ընկերությունը պարտավոր է իր  
բաժնետերերին հնարավորություններ ընձեռել  
Օրենքով սահմանված փաստաթղթերին  
ծանոթանալու համար: Բաժնետիրոջ պահանջով  
Ընկերությունը պարտավոր է 5-օրյա ժամկետում  
նրան ընձեռել Կանոնադրության,  
Կանոնադրության լրացումների և  
փոփոխությունների հետ ծանոթանալու  
հնարավորություն: Ընկերությունը պարտավոր է  
այդ անձի պահանջով տրամադրել նրան  
Կանոնադրության պատճենը: Պատճեններ  
տրամադրելու համար վճարի չափը չի կարող  
դրանց պատրաստման և փոստային առաքման  
ծախսերից ավելի լինել:

9.4. Բաժնետոմսերի սեփականատերերը  
պարտավոր են չիրապարակել Ընկերության  
գործունեության վերաբերյալ գաղտնիք  
ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք  
ներկայացնող տեղեկությունների ցանկը  
սահմանում է խորհուրդը:

## 10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԿՈՒԹԱՐԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում  
ընդունել (հայտարարել) տեղաբաշխված  
բաժնետոմսերի դիմաց եռամսյակային,  
կիսամյակային, կամ տարեկան  
շահութաբաժինների վճարման մասին:

10.2. Ընկերությունը վճարում է բաժնետոմսերի  
համար հայտարարված շահութաբաժինները՝

8) authorize a third person to represent his/her  
rights in the Meeting.

9) make proposals at the Meeting.

10) have a vote in the Meeting, equivalent  
to the extent of the vote granted by his/her  
shares;

11) go to court, appealing decisions of the  
Meeting that contradict laws and other legal  
acts.

12) in the case of Company liquidation,  
obtain a part of its property; and

13) enjoy other rights stipulated by the  
Charter.

9.3 If requested by a shareholder, the  
Company shall provide to the shareholder an  
opportunity to learn about the amendments and  
modifications in the Company Charter within a  
period of 5 days after such request is made. The  
Company shall, at the request of the  
shareholder, provide the latter with a copy of the  
current Charter. The fee charged for providing a  
copy of the Charter cannot exceed the cost of  
making the copy.

9.4. Holders of ordinary (plain) shares shall  
refrain from disclosing confidential information  
on the activities of the Company. The Board  
shall define a list of confidential information.

## 10. PROCEDURE OF DIVIDEND PAYMENT

10.1. The Company may decide (announce) that  
it will pay quarterly, semi-annual, or annual  
dividends for outstanding shares.

10.2. For shares, the Company shall pay the  
announced dividends in AMD, other property,  
including the shares of the Company.

դրամով և այլ գույքով, այդ թվում՝ տվյալ  
Ընկերության բաժնետոմսերով:

10.3. Շահութաբաժինները վճարվում են  
Ընկերության զուտ շահույթից (կուտակված  
շահույթից):

10.4. Բաժնետոմսերի միջանկյալ  
(եռամսյակային և կիսամյակային)  
շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի  
չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն  
ընդունում է Խորհուրդը: Բաժնետոմսերի  
տարեկան շահութաբաժինների վճարման,  
շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի  
մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Խորհրդի  
առաջարկությամբ: Միջանկյալ  
շահութաբաժինների չափը չի կարող  
գերազանցել նախորդ ֆինանսական տարվա  
արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50  
տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի  
կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և  
պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ  
շահութաբաժինների չափից:

10.5. Եթե ժողովի որոշմամբ տարեկան  
շահութաբաժինների չափն սահմանվում է արդեն  
վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին  
հավասար, ապա բաժնետոմսերի դիմաց  
տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

10.6. Եթե ժողովի որոշմամբ տարեկան  
շահութաբաժինների չափն սահմանվում է արդեն  
վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից  
ավելի, ապա բաժնետոմսերի դիմաց տարեկան  
շահութաբաժինները վճարվում են սահմանված  
տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում  
արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների  
գումարի տարբերությամբ:

10.7. Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել  
բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ  
չվճարելու մասին:

10.8. Տարեկան շահութաբաժինների վճարման  
ժամկետը սահմանվում է ժողովի՝  
շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:  
Միջանկյալ շահութաբաժինների վճարման  
ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ  
շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ,  
բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման  
պահից 30 օր անց: Տարեկան և միջանկյալ  
շահութաբաժինները վճարվում են  
շահութաբաժինների վճարման մասին որոշումն  
ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

10.9. Շահութաբաժինների յուրաքանչյուր  
վճարման համար Խորհուրդը կազմում է  
շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող  
բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

10.3.Dividends are paid at the cost of the net  
profit (retain profit).

10.4.The Board shall adopt a decision on the  
payment, the size, and the method of payment  
of the interim (quarterly and semi-annual)  
dividends for shares. The Meeting shall, at the  
recommendation of the Board, adopt a decision  
on the payment, the size, and the method of  
payment of annual dividends for shares. The  
interim dividends may not be greater than 50  
percent of the dividends paid out at the end of  
the previous financial year. The annual  
dividends may not be greater than the limit  
proposed by the Board and less than the interim  
dividends that have already been paid.

10.5.If the Meeting decides to set the size of  
annual dividends for shares equal to the size of  
the interim dividends that have already been  
paid, then annual dividends shall not be paid for  
shares.

10.6.If the Meeting decides to set the size of  
annual dividends for shares greater than the  
size of the interim dividends that have already  
been paid, then annual dividends shall be paid  
out in an amount equal to the difference  
between the defined annual dividends and the  
interim dividends that have already been paid  
out in the current year.

10.7.The Meeting may decide that dividends not  
be paid out for shares.

10.8.The deadline for payment of annual  
dividends shall be defined by a decision of the  
Meeting on payment of dividends. The deadline  
for payment of interim dividends shall be defined  
by a decision of the Board on payment of interim  
dividends, but no earlier than after 30 days from  
the adoption of the aforementioned decision.

10.9.For every payment of dividends, the Board  
shall elaborate a list of eligible shareholders,  
which shall include:

1) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

2) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին (այսուհետ՝ տարեկան ժողով) մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

10.10. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

1) լրիվ չի վճարվել Կանոնադրական կապիտալը:

2) Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը Օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան

3) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով:

4) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

## 11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ընկերության կառավարման մարմիններն են՝

- 1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- 2) Ընկերության խորհուրդը,
- 3) Ընկերության Գլխավոր տնօրենը:

### 11.1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

11.1.1. Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

1) in the case of interim dividends, those shareholders of the Company that were listed in the Company's shareholder registry at least 10 days before the adoption of the Board decision on payment of interim dividends; and

2) in the case of annual dividends, those shareholders of the Company that were listed in the Company's shareholder registry as of the date when the list of shareholders eligible to participate in the Company's Annual Meeting of Shareholders (hereinafter, the Annual Meeting) was prepared.

10.10. The Company may not decide (announce) that it will pay dividends for outstanding shares if:

1) the Company Statutory capital has not been paid up;

2) the Company has not bought back all the shares under the provision of Article 58 of the Law;

3) as of the time of adopting a decision on payment of dividends, the condition of the Company is consistent with the insolvency (bankruptcy) criteria stipulated by law, or the Company will become insolvent (bankrupt) due to the payment of dividends; and

4) the Company's net assets are smaller than the Statutory capital, or they will become smaller as a result of dividend payment.

## 11. MANAGING BODIES OF THE COMPANY

The managing bodies of the Company are:

- 1) the general meeting of shareholders of a Company;
- 2) the Board of the Company;
- 3) the General Director.

### 11.1. GENERAL MEETING OF SHAREHOLDERS OF THE COMPANY

The Meeting is the highest management body of the Company.



11.1.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

- 1) Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
- 2) Ընկերության վերակազմակերպումը,
- 3) Ընկերության լուծարումը,
- 4) Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
- 5) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- 7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
- 8) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
- 9) Ընկերության Գլխավոր տնօրենի նշանակումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը,
- 10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- 11) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը,
- 12) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- 13) առանձին տեսակների կամ դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու մասին որոշումների ընդունումը,
- 14) Ժողովի վարման կարգի հաստատումը,
- 15) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
- 16) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

11.1.2. The Meeting has the right to:

- 1) approve the Charter, amendments and extensions thereto, and a new edition of the Charter;
- 2) reorganize the Company;
- 3) liquidate the Company;
- 4) approve the final, interim, and liquidation balance sheets, and appoint a liquidation commission;
- 5) determine how many members there shall be in the Board, select them, and implement early termination of their powers;
- 6) define the maximum amount of announced shares;
- 7) reduce Company Statutory capital by means of lowering the nominal value of shares, reducing the total number of shares outstanding by the Company, or by means of redeeming shares acquired or bought back by the Company;
- 8) increase Company Statutory capital by means of increasing the nominal value of shares or allocating additional shares;
- 9) appoint the General Director of the Company and terminate its rights before the expiration of its term; as well as the appoint an official temporarily exercising the powers of the General Director;
- 10) approve the external auditor of the Company;
- 11) approval of the Employee Stock Ownership Plan;
- 12) approve the annual reports of the Company, its accounting reports, profit and loss accounts, and the distribution of profits and losses, as well as decide on the payment of annual dividends and determine the size thereof;
- 13) making decisions on non-payment of dividends for shares of certain types or classes;
- 14) determine the procedure of operation of the Meeting.
- 15) appoint an enumeration commission;
- 16) decide on consolidation and fragmentation of shares;

17) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

18) Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման վերաբերյալ խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

19) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը.

20) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

21) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում.

22) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (Խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, Գլխավոր տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

23) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.

24) Օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

11.1.3. Կանոնադրությամբ ժողովի իրավասությանը վերապահված հարցերի լուծումը չի կարող փոխանցվել Խորհրդին, բացառությամբ սույն Կանոնադրության 11.1.2 կետի 8-10-րդ ենթակետերով, ինչպես նաև 11.1.2 կետի 20-րդ, 21-րդ և 22-րդ (բացառությամբ Խորհրդի նախագահի կամ անդամի վարձատրության) և 23-րդ ենթակետերով սահմանված ժողովի իրավասությունների, որոնք ժողովի որոշմամբ կարող են վերապահվել Խորհրդին:

11.1.4. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բաժնետերերը:

11.1.5. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով կամ Ընկերության Կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

11.1.6. Կանոնադրության 11.1.2-րդ կետի 2-րդ, 16-18-րդ, 20-րդ և 21-րդ կետերում թվարկված հարցերով ժողովի որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

17) decide on consummation of transactions in cases foreseen by Article 64 hereof;

18) decide on consummation of Large Transactions in Involving Acquisition and Alienation of Company Property

19) Adoption of decisions in the cases defined by the Law of the Republic of Armenia "On Securities Market"

20) determine the method the Company will use to deliver information to shareholders, including the selection of a mass media, if the information is to be presented in the form of a public statement;

21) decide that the Company shall acquire outstanding shares and buy them back in cases stipulated by the Law;

22) determine the conditions of remuneration to management officials of the Company (chairman or a member of the Board, the General director).

23) decide that the Company create daughter or dependent companies.

24) adopt other decisions stipulated by this Law and the Charter.

11.1.3. Adoption of decisions referred to within the competence of the Meeting shall be the exclusive right of the Meeting, which may not be transferred to the Board of directors, except for the matters specified under sub-clauses 8-10 of clause 11.1.2 of this Charter, as well as sub-clauses 20, 21 and 22 (except for the remuneration of the chairman or member of the Board) and sub-clauses 23 of clause 11.1.2 based on the Meeting decision, the Board of directors may be authorized to adopt decisions.

11.1.4. Owners of ordinary (nominal) shares of the Company shall have a voting right in the Meeting.

11.1.5. Meeting decisions are adopted by a simple majority vote of all the owners of voting shares participating in the Meeting unless a greater vote is required under this Law or the Charter.

11.1.6. Decisions on matters referred to in sub-clauses 2, 16-18, 20 and 21 of clause 11.1.2 of the Charter are adopted by the Meeting only upon presentation thereof by the Board.

11.1.7. Կանոնադրության 11.1.2-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ և 18-րդ կետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

11.1.8. Կանոնադրության 11.1.2-րդ կետի 3-րդ, 7-րդ և 16-րդ կետերով սահմանված հարցերով որոշումները, ինչպես նաև Ընկերության Կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումները, որոնցով Ընկերությունում ստեղծվում են հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսերի նոր դասեր, կամ փոփոխվում են հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսերի դասերի պայմանները, ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պայմանների փոփոխության հանգեցնող որոշումները, որոնցով սահմանափակվում են այդ բաժնետոմսերով հատկացվող իրավունքները, կարող են ընդունվել, երբ դրանց կողմ են քվեարկել համապատասխան դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը:

11.1.9. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելին տիրապետող բաժնետերերը:

11.1.7. Decisions on matters referred to in sub-clauses 1, 2, 4, 6 and 18 of clause 11.1.2 of the Charter are adopted by the Meeting by means of a 3/4s vote of the owners of voting shares participating in the Meeting.

12.1.3. Decisions on matters referred to in sub-clauses 3, 7, 16 of clause 11.1.2 of the Charter, as well as decisions on making such changes and amendments to the Company's Charter or on approving a new edition of the Charter creating ordinary (plain) or New classes of preferred shares, or changing the conditions ordinary (plain) or preferred shares are adopted by a meeting of 3/4 of the votes of the participating shareholders, but not less than 2/3 of the votes of the votes of the owners of voting shares. Decisions changing the terms of placement of ordinary (plain) shares, limiting the rights granted by these shares, may be taken if the owners or nominee holders of at least 3/4 of the ordinary (plain) shares of the corresponding category voted for them.

11.1.9. Decisions of the Meeting can be made without discussing the agenda items, for the purpose of the joint presence of the Company's members to make decisions on issues put to the vote, by Remote voting (including online voting). Remote voting may be carried out by exchanging documents by postal, telegraph, telex, telephone, electronic communication, by confirming the authenticity of transmitted, received and received messages by the addressee. A decision adopted by a remote Meeting shall have legal force if more than half of the owners of voting shares of the Company have participated in the vote.

11.1.20. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով զանգատարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի կողմից ընդունված որոշումը:

11.1.20.A shareholder may protest in court a decision of the Meeting, which allegedly was adopted in violation of the Law, other legal acts, and the Charter.

11.1.21. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 50-ից ավելի տոկոսին: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

11.1.21.A Meeting is eligible (has quorum) if, at the time of completing registration of Meeting participants, the owners (or representatives of owners) of an aggregate of more than 50 percent of the Company's outstanding voting shares have registered. In the absence of a quorum, the date of a new Meeting shall be announced. In this case, the agenda may not be changed.

11.1.22. Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 30-ից ավելի տոկոսին:

11.1.22. A net Meeting in lieu of one that did not happen shall be eligible if, at the time of completing registration of Meeting participants, the owners (or representatives of owners) of an aggregate of more than 30 percent of the Company's outstanding voting shares have registered.

11.1.23. Ընկերությունը ամեն տարի գումարում է Տարեկան ժողով: Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

11.1.23.The Company shall assemble an Annual General Meeting of Shareholders every year. The annual Meeting shall be assembled no later than within six months after the end of a financial year. Any Meeting in addition to the annual one shall be considered extraordinary. Extraordinary Meetings shall be held to discuss urgent issues.

11.1.24. Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև Գլխավոր տնօրենի, Ներքին աուդիտի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Եթե Օրենքով սահմանված ժամկետում Խորհուրդը արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

11.1.24.Annual and Special Meetings shall be held on the basis of a Board decision in written form, at its initiative. Special Meetings shall be held also at the request of the General director of the Company, the internal auditor, the external auditor, or a shareholder of at least 10 percent of voting shares of the Company as of the date of filing such request. If the Board does not adopt a decision on holding a special Meeting or decides to refuse holding it, then a special Meeting may be held by the person submitting the request.

11.1.25. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

1) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

2) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները և Գլխավոր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

3) Ընկերության ներքին աուդիտորը՝ որպես դիտորդ.

4) Ընկերության արտաքին աուդիտորը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

11.1.26. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրավարի տված տվյալների (ցուցակի) հիման վրա: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

11.1.27. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի: Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

11.1.28. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:

11.1.25. The following shareholders shall have a right to participate in the Meeting:

1) owners of ordinary (nominal) shares of the Company, with a vote that is equivalent to the quantity and nominal value of the shares they own;

2) Members of the board who are not shareholders of the company and General Director with a consultative vote;

3) Internal auditor of the Company; and

4) the external auditor of the Company (if its report is available in the materials of the Meeting).

11.1.26. A list of shareholders eligible for participation in the Meeting shall be elaborated based on the Company's shareholder registry data as of the date, month, and year defined by the Board. For purposes of elaborating the list of eligible shareholders, a nominal owner of shares shall provide data (as of the date, month, and year of making the list) on persons whose interests he/she represents by managing the shares.

11.1.27. The date, month, and year of elaborating the list of eligible shareholders for participation in the Meeting may not be earlier than the decision on holding a Meeting and later than 60 days after the date of the Meeting. If a remote vote is carried out, then the date, month, and year of elaborating the list of eligible shareholders shall be at least 35 days before the date of the Meeting.

11.1.28. Changes to the list of eligible shareholders may be made only to correct mistakes therein or to restore the violated rights and lawful interests of shareholders omitted from the list.

11.1.29. ժողովի գումարման մասին բաժնետերերը պետք է ծանուցվեն ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ծանուցումը պետք է առնվազն պարունակի Օրենքով նախատեսված տեղեկությունները, այդ թվում՝ ժողովի վայրը, ամսաթիվը, օրակարգի հարցերը: Ծանուցումը պետք է իրականացվի ֆաքսի, էլ-փոստով ուղարկված նամակի, պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնելու միջոցով:

11.1.30. Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

11.1.31. Ընկերության բաժնետերերը (բաժնետերերը), որը (որոնք) տիրապետում է (են) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 2 տոկոսին, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը: Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը և առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը: Ներկայացվում են խորհրդի համար առաջարկվող թեկնածուների անունները (այդ թվում՝ սեփական անձին առաջարկելու դեպքում)՝ նշելով, թե առաջարկվող թեկնածուն բաժնետեր է, թե ոչ, եթե այո, ապա ինչ քանակի բաժնետոմսեր են նրան պատկանում, ով է առաջարկում նրա թեկնածությունը և ինչ քանակի բաժնետոմսեր են պատկանում առաջարկող բաժնետերերին: Խորհուրդը պարտավոր է

11.1.29. The Company shall notify its shareholders of holding a Meeting at least 15 days before the date of the Meeting. The notification must contain at least the information required by law, including the place, date and agenda of the General Meeting. The notification must be made by fax, email, mail order or delivered in person.

12.1.4. If the person registered in the Company's shareholder registry is a nominal holder of securities, then the notification on holding a Meeting shall be sent out to him/her. The latter shall, in the time period stipulated by laws, legal acts, or an agreement between him/her and the persons, forward the notification to the persons whose interests he/she represents.

11.1.31. The Company shareholder (shareholders) who owns (own) at least 2 percent of the Company's voting shares may, within 30 days after the end of the financial year, submit a maximum of two suggestions on the annual Meeting agenda, as well as proposed candidates for members of the Board. The number of candidates proposed shall not exceed the number of members in Board. Suggestions on the annual Meeting agenda shall be presented in writing, specifying the grounds, the name of the shareholder suggesting incorporation of the issue in the agenda, the quantity of his/her shares (by type and class), and the signature (or its facsimile copy) of the shareholder (-s) making the suggestion. The names of the proposed candidates for the Board (including, in the case of proposing one's own self) shall be provided, specifying whether the proposed candidate is a shareholder or not, if yes, what quantity (including type and class) of shares he/she owns, who is proposing his/her candidacy, and what quantity of shares to the proposing shareholders own (including type and class). The Board shall discuss the suggestions/proposals and determine whether they will or will not be incorporated in the agenda or the list of candidates. In case of a refusal, the latter shall be provided within 15 days after the expiration of the deadline referred to in this clause.

քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում:

11.1.32. Ժողովներում նախագահում է Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում ժողովը նախագահում է ժողովին ներկա բաժնետերերից ամենատարեցը, եթե ժողովի գումարման մասին որոշմամբ այլ անձ նշանակված չէ:

11.1.33. Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

11.1.34. Ժողովի ընդունած որոշումների, ինչպես նաև քվեարկության արդյունքների մասին տեղեկատվությունը Ընկերության բաժնետերերին է ներկայացվում Օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետում՝ նման որոշումներն ընդունելուց հետո 45 օրվա ընթացքում:

## 11.2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ

11.2.1. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը: Խորհրդի անդամները ընտրվում են ժողովի կողմից՝ մեկ տարի ժամանակով: Խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել սովորական քվեարկությամբ:

11.2.2. Ժողովի որոշմամբ Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարգևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևավճարի և (կամ) փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են ժողովի որոշմամբ:

11.1.32. The meeting is chaired by the chairman of the board, and in his absence, the meeting is chaired by the senior shareholder present at the meeting, unless another person is appointed by the decision to convene the meeting.

11.1.33. Meeting minutes shall be prepared within 5 days after the Meeting is over, with at least two copies signed by the Meeting chairman and secretary. The Meeting chairman shall be responsible for the truthfulness of the information contained in the Meeting minutes.

11.1.34. Information on the decisions passed by the Meeting, as well as the results of the vote shall be presented to the Company shareholders in the manner and the time period stipulated by the Law and the Charter, within 45 days after such decisions are passed.

## 11.2. BOARD OF DIRECTORS

11.2.1. The Board implements general management of Company's activities. Board members are elected by the Annual Meeting for a term of one year. Board elections can be held by ordinary voting.

11.2.2. The Meeting may decide that the Board members be rewarded and/or compensated for the expenses incurred in connection with implementation of their duties as Board members. The size and payment procedure of the reward and/or compensation shall be determined by a Meeting decision.

11.2.3.Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

- 1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
- 2) Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- 3) Ժողովի օրակարգի հաստատումը.
- 4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը.
- 5) Սույն Կանոնադրության 11.1.6 կետով նախատեսված հարցերը ժողովների քննարկմանը ներկայացնելը.
- 6) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Կանոնադրական կապիտալի ավելացումը.
- 7) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
- 8) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքով սահմանված դեպքերում.
- 9) Օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
- 10) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (Գլխավոր տնօրենի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը.
- 11) Ընկերության ներքին աուդիտորի նշանակումը.
- 12) Խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.
- 13) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
- 14) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
- 15) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
- 16) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

11.2.3.The Board shall have the exclusive right to:

- 1) determine the main areas of Company activities;
- 2) assemble annual and special Meetings, except for cases specified in the Law;
- 3) approve the Meeting agenda;
- 4) approve the date of preparing the list of shareholders eligible to participate in the Meeting, and resolve all those issues related to the preparation and implementation of the Meeting, which the Board is authorized to resolve;
- 5) present to the Meeting the matters referred to in subparagraphs 11.1.16 of the Charter;
- 6) increase Company Statutory capital by means of increasing the nominal value of shares or allocating additional shares, if so entitled by a Meeting decision;
- 7) allocate bonds and other securities;
- 8) determine the market price of property in the manner stipulated by the Law;
- 9) in cases stipulated the Charter and the Law, acquire outstanding shares, bonds, and other securities of the Company;
- 10) appoint General director of the Company, carry out early termination of its operation, determine the procedure and conditions of remuneration and compensation to General director;
- 11) appoint the internal auditor of the Company;
- 12) Formation of committee attached to the Board, including audit;
- 13) determine the amount of payment to the auditor of the Company;
- 14) prepare recommendations to the Meeting regarding the size and payment procedure of annual dividends;
- 15) determine the size and payment procedure of interim (quarterly or semi-annual) dividends;
- 16) utilize the Company's reserve fund and other funds;



17) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

18) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է Խորհրդին և, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ.

19) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

20) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ.

21) Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում.

22) Օրենքով նախատեսված դեպքերում Շահագրգռվածության առկայության գործարքների կնքումը.

23) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

24) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

25) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

26) Օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

11.2.4. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել:

11.2.5. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

11.2.6. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին:

11.2.7. Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

17) approve internal documents regulating the activities of management bodies;

18) create daughter and dependent companies, determine on participation in daughter and dependent companies, if so entitled by the Charter, and if such participation does not represent a large transaction;

19) create Company branches, representative offices, and institutions;

20) participate in other organizations, unless such participation represents a large transaction;

21) enter into transactions on alienation and acquisition of Company property in cases stipulated by the Law;

22) consummate transactions where a Conflict of Interests Exists stipulated by the Law;

23) approve the organizational structure of the Company;

24) approve the annual cost estimate and its execution;

25) approve the staff lists; and

26) resolve other issues stipulated by this Law and the Charter.

11.2.4. The number of Board members shall be determined by a Meeting decision, but may not be smaller than three.

11.2.5. Board members are elected by the Annual Meeting; alternatively, when membership in the Board terminates early, an extraordinary Meeting shall adopt this decision in the manner stipulated by this Law and the Charter. The rights of the Board members shall terminate when the next Board is elected.

11.2.6. The shareholders and nominal holders of the Company that own 10 percent or more of the Company's voting shares as of the date of elaborating the list of shareholders eligible for participation in the Meeting may either become Board members without having to be elected, or appoint their representative in the Board.

11.2.7. Each shareholder may take up only one place in the Board.

11.2.8.Խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը:

11.2.9.Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը սահմանվում է ժողովի որոշմամբ Օրենքով սահմանված կարգով:

11.2.10. Ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

11.2.11. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները, Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

11.2.12. Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

11.2.13. Խորհրդի նախագահը՝

- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- 2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
- 3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
- 4) նախագահում է ժողովներում, եթե այլ բան նախատեսված չէ Կանոնադրությամբ:

11.2.14. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության ներքին աուդիտի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության Գլխավոր տնօրենի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ Խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

11.2.15. Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, երբ ներկա են Խորհրդի անդամների կեսը: Եթե Խորհրդի անդամների թիվը նվազում է ժողովի կողմից սահմանված թվի կեսից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է Խորհուրդը: Այդ, ինչպես նաև ժողովի գումարմամբ պայմանավորված այլ որոշումներից բացի, Խորհուրդն այլ որոշումներ ընդունելու իրավունք չունի:

11.2.8. Non-shareholders of the Company may become Board members.

11.2.9. The total length of a member's term in the Board shall be determined by the Meeting.

11.2.10. The Meeting may decide to exercise early termination of the service of any Board member (all the members).

11.2.11. The Chairman of the Board is one of the Board members, who is elected as Chairman by the Board members with a majority of votes.

11.2.12. The Board may, at any time, re-elect the Chairman or elect a new Chairman with a majority of votes of the Board members.

11.2.13. The Chairman of the Board:

- 1) coordinates the activities of the Board;
- 2) assembles Board sessions and chairs them;
- 3) coordinates the filing of session minutes; and
- 4) chairs the Meetings, unless otherwise stipulated by the Charter.

11.2.14. Board sessions are assembled by the Chairman of the Board at the initiative of the Chairman of the Board, at the request of a Board member, the Internal auditor, the Company's auditor, the General director. The procedure of assembling and carrying out Board sessions shall be defined in the by-law of the Board, as approved by the Meeting. The Board may adopt decisions by means of a remote vote, unless otherwise stipulated by the Charter.

11.2.15. Board session quorum shall be no lower than half of the Board members. If the number of Board members falls below half of the number foreseen by the Charter, then the Company shall, at the decision of the Board, assemble a special Meeting to elect Board members. The Board may not adopt any decisions other than this and other decisions due to holding a Meeting.

11.2.16. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով, սույն Կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած Խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ: Կանոնադրությամբ նախատեսված ժողովի այն իրավասությունների վերաբերյալ որոշումները, որոնք ժողովի որոշմամբ վերապահվել են Խորհրդի իրավասությանը, ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով, եթե Օրենքով, Կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած Խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

11.2.17. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝  
1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.  
2) նիստին ներկա անձինք.  
3) նիստի օրակարգը.  
4) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.  
5) նիստում ընդունված որոշումները:

11.2.18. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

### 11.3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼխԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

11.3.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը:

11.3.2. Գլխավոր տնօրենը իրավասության ներքո են գտնվում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով կամ Կանոնադրությամբ ժողովի կամ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:

11.2.16. Board decisions are adopted by a majority of votes of the Board members present in the session, unless this Law, the Charter or the Board by-law approved by the Meeting stipulate otherwise. Decisions on the powers of the Meeting provided for in the Charter, which are reserved to the competence of the Board by the decision of the Meeting, are made by 3/4 of the total number of votes of the Board members, unless otherwise provided by law, Charter or Board regulations. In the vote, each Board member shall have one vote. A Board member may not transfer his/her vote and voting right to another Board member (or anyone else). The Chairman of the Board shall be entitled to a decisive vote

11.2.17. Minutes of Board sessions are kept. Session minutes shall be prepared within 5 days after the end of the session. The minutes shall specify:

- 1) the date, time and place of the session;
- 2) the list of attendees;
- 3) the session agenda;
- 4) the questions voted on, and the results of the vote; and
- 5) the decisions adopted in the session.

11.2.18. Board session minutes shall be signed by all the Board members participating in the session, who shall be responsible for the truthfulness of the information in the minutes.

### 11.3. GENERAL DIRECTOR

11.3.1. Management of current operations of the Company is carried out by the General director.

11.3.2. The General director is authorized to decide on all the Company management issues, except for cases that, under this Law and the Charter, may be resolved exclusively by the Meeting and the Board.

11.3.3. Գլխավոր տնօրենը կազմակերպում է ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

11.3.4. Գլխավոր տնօրենի նշանակման ու վերջինիս լիազորությունների վաղաժամկետ դադարեցման իրավասությունը պատկանում է Խորհրդին:

11.3.5. Գլխավոր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, այլ իրավական ակտերով և Ընկերության ու Գլխավոր տնօրենի հետ կնքված պայմանագրով: Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

11.3.6. Ընկերության Գլխավոր տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

8) իրականացնում է Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը կամ հետզնումը, եթե ժողովի որոշմամբ այդ լիազորությունը տրված է գործադիր մարմնին.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

11) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

11.3.3. The General director shall organize the implementation of the decisions of the Meeting and the Board.

11.3.4. Appointment and early termination of the General director shall be implemented by a decision of the Board.

11.3.5. The rights and responsibilities of the General director shall be defined by the Law, other legal acts, and the contracts of the General director with the Company. On behalf of the Company, the contract shall be signed by the Chairman of the Board or another person authorized by the Board.

11.3.6. The General Director

1) manages Company property, including cash, and enters into transactions on behalf of the Company;

2) represents the Company in the Republic of Armenia and abroad;

3) acts without a power of attorney;

4) issues powers of attorney;

5) enters into contracts, as designated, including labor contracts;

6) opens Company bank accounts (including forex accounts);

7) submits to the Board for approval the internal labor regulation of the Company, the by-laws of separated subdivisions, the organizational structure of the Company, and the staff/payroll lists;

8) acquires or buys back shares outstanding by the Company, if this right is granted to the executive body by a decision of the Meeting;

9) as entitled, issue decrees, orders, compelling instructions, and monitor their enforcement;

10) in the established manner, recruit and dismiss Company staff; and

## 12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

12.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանումը:

12.2. Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանումը բաղկացած առնվազն մեկ անձից՝ ներքին աուդիտորից, որին ընտրում է Ընկերության խորհուրդը:

12.3. Ներքին աուդիտոր չի կարող լինել Ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ իրավասություններով օժտված ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև Ընկերության, դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:

12.4. Ներքին աուդիտորն անկախ է իր իրավասություններն իրականացնելիս և հաշվետու է Ընկերության խորհրդին:

12.5. Ներքին աուդիտորն Ընկերության կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

1) հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ.

2) ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենսդրությամբ, կարգավորվող շուկայի կանոններով, Ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին.

3) տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:

12.6. Ընկերության տարեկան հաշվեկշռի, ներառյալ եկամտի, հաշվապահական հաշվեկշռի և դրամական հոսքի վերաբերյալ հաշվետվության հաստատման ժամանակ ներքին աուդիտորի եզրակացությունը պարտադիր է:

12.7. Ընկերության Գլխավոր տնօրենը ապահովում է բավարար պայմաններ ներքին աուդիտորի իրավասությունների արդյունավետ իրականացման համար:

11) apply encouragement and discipline-related liability in regards to employees;

## 12.INTERNAL AUDIT OF THE COMPANY

12.1.The control over the financial and economic activities of the Company is carried out by the Internal Audit Unit of the Company.

12.2.The Company's internal audit unit consists of at least one person, an internal auditor, elected by the Company's Board.

12.3.A member of management body of the Company, another executive officer and employee, as well as any person affiliated with the investment Company, its executive officers or other employees may not be an internal auditor

12.4. Internal auditor of the Company shall be independent in exercising its competencies and shall report to the Board of Directors.

12.5. In compliance with the internal procedures approved by the Company, the internal auditor shall:

(1) supervise current activity and risks of the investment Company;

(2) check the compliance of the investment Company's activity with the requirements prescribed by law, the regulatory legal acts based thereon, regulated market rules, rules of activities of the Company and other legal acts;

(3) provide opinions and submit proposals on issues presented by the competent management body and other issues.

12.6.The opinion of the internal auditor is mandatory when approving the annual reports of the Company, including income statement, balance sheet and cash flow statement.

12.7.General Director of the Company shall be obliged to ensure adequate condition for effective implementation of the competencies of the internal auditor.

12.8. Ներքին աուդիտորը պարտավոր է հայտնել Ընկերության Գլխավոր տնօրենին, խորհրդին, համապատասխան կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական բանկին Ընկերության կողմից օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած խախտման, ինչպես նաև հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին՝ դրանց հայտնաբերման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

12.9. Ներդրումային Ընկերությունը վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծում:

### **13. ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՈՐԴԻՏԸ**

13.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտորական ստուգման՝ աուդիտն իրականացնող անձի (արտաքին աուդիտորի) կողմից:

13.2. Աուդիտն իրականացնող անձը պետք է համապատասխանի ներդրումային ընկերության աուդիտն իրականացնող անձի նկատմամբ սահմանված չափանիշներին:

13.3. Աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին:

### **14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՏԱՐՈՒՄԸ**

14.1. Ընկերությունը ժողովի որոշմամբ կարող է կանոնվին վերակազմակերպվել կամ լուծարվել: Ընդ որում Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:

14.2. Ընկերության վերակազմակերպման և լուծարման հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ իրավական ակտերով:

### **15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

15.1. Կանոնադրությունը կազմված է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով և հաստատված է (ներառյալ նոր խմբագրությամբ Կանոնադրությունը, փոփոխությունները և

12.8. Internal auditor shall be obliged to notify the General Director of the Company, the Board of directors, the corresponding regulated market operator and the Central Bank about any violation of the requirements prescribed the by law, other legal acts, as well as about any substantial damage caused to the interests of clients, within 5 working days after its disclosure.

12.9. The investment Company shall not establish a revision commission.

### **13. ANNUAL AUDIT OF FINANCIAL AND ECONOMIC ACTIVITY**

13.1. Financial and economic activity of the investment Company shall be audited every year by a person carrying out audit.

13.2. The person conducting the audit must comply with the criteria set for the person conducting the audit of an Investment Company.

13.3. An audit of the investment Company, at any time, may be requested the Board at the expense of the funds of the investment Company.

### **14. RECONSTRUCTION AND LIQUIDATION OF THE COMPANY**

14.1. The Company may be voluntarily reorganized or liquidated by the decision of the Meeting. The Company may be reorganized solely by merging or reorganizing with another investment Company.

14.2. The grounds for reorganization-liquidation of the Company, as well as the procedure for its reorganization and liquidation, are defined by the Law of the Republic of Armenia "On Securities Market", the Law and other legal acts.

### **15. ENTRY INTO FORCE OF THE COMPANY'S CHARTER**

15.1. The Charter is drawn up in the form of an electronic document and approved (including the new edition of the Charter, amendments and

լրացումները) ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված ստորագրությամբ:

15.2. Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրությունը ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրանք գրանցելու պահից:

additions) by an electronic-digital signature provided by the Central Bank of Armenia.

15.2. Amendments to the Charter and Additions, as well as a new edition of the Company Charter shall enter into force upon registration by the Central Bank of the Republic of Armenia.

**Համարակալված և կնքված է 31 (երեսունմեկ) թերթ**

Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության

Լիցենզավորման ու գրանցման առաջին բաժնի պետ՝

Նարինե Շատիրյան



Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության

Լիցենզավորման ու գրանցման առաջին բաժնի վերահսկող՝

Ռաֆիկ Առաքելյան

